



**«Երիտասարդները վստահության մասին» մրցույթ
2022**

PERITIA

Չանրային քաղաքականություն, փորձագիտություն, վստահություն

Ուրախ կլինենք իմանալ, թե ինչ է Ձեզ համար վստահությունը

Չայտերն ընդունվում են մինչև 2022 թվականի մարտի 1-ը

[Տեսանյութը դիտեք այստեղ:](#)

Ուրախ ենք հայտարարել PERITIA ծրագրի շրջանակներում իրականացվող «Երիտասարդները վստահության մասին» 2022 թվականի հատուկ մրցույթի մասին: Եվրոպացի աշակերտներին հրավիրում ենք հասարակական և քաղաքական կյանքում վստահությանը վերաբերող թեմաների մասին իրենց տեսակետները բարձրաձայնել:

«Երիտասարդները վստահության մասին» մրցույթի շրջանակներում աշակերտները կստեղծեն նախագծեր, որոնք կանդրադառնան այն հարցերին կամ խնդիրներին, որոնք, ըստ իրենց, վստահության տեսանկյունից հանրային կյանքում կարևորագույնն են: Նախագծերը կարող են լինել էսսեի, փողօսաթի, ֆիլմի, բլոգային գրառման, կարճ պատմվածքի կամ երկխոսության ձևաչափով:

«Երիտասարդները վստահության մասին» մրցույթը բաց է 13-18 տարեկան աշակերտների համար: 13-14, 15-16 և 17-18 տարիքային խմբերի աշակերտները կմրցեն առանձին մրցանակային անվանակարգերով: Չայտերն ընդունվում են Եվրոպայի խորհրդի անդամ 47 երկրներից ցանկացածից: Չաղթող աշխատանքները կհրապարակվեն, իսկ հեղինակները կստանան Բրյուսել այցելելու հնարավորություն:

Մենք եվրոպացի աշակերտներին քաջալերում ենք կիսվել հանրային վստահության մասին իրենց գաղափարներով:

Ահա հանրային վստահությանը վերաբերող մի քանի հարց, որոնք կարող եք դիտարկել.

- Ի՞նչ է վստահությունը:
- Կարո՞ղ ենք վստահել սոցիալական ցանցերին: Ինչո՞ւ այո և ինչո՞ւ ոչ:
- Որքանո՞վ է կարևոր վստահությունը սոցիալական կյանքի համար:
- Արդյո՞ք վստահությունը կարևոր է ժողովրդավարական հասարակությունների համար:
- Ի՞նչ է նշանակում վստահել փորձագետներին:
- Ինչո՞ւ ենք որոշ հասարակական գործիչների ավելի շատ վստահում, քան մյուսներին:
- Ո՞րն է նման վստահության հիմքը:
- Ինչո՞ւ է վստահությունը նվազում:

- Արդյո՞ք անվստահությունը վատ երևույթ է:
- Մեզ համար գիտնականների կամ քաղաքական գործիչների ո՞ր հատկություններն են կարևոր նրանց վստահելու համար:
- Ինչպե՞ս ենք մենք տարբերում կեղծ լուրերը և իրական/վստահելի տեղեկատվությունը:
- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի սոցիալական ցանցերը կամ ավանդական լրատվամիջոցները վստահելի դառնան:
- Արդյո՞ք COVID համաճարակի ազդեցությամբ փոխվել է գիտության նկատմամբ մեր վստահությունը:
- Արդյո՞ք COVID համաճարակի ընթացքում փոխվել է քաղաքականության նկատմամբ մեր վստահությունը:
- Կարո՞ղ ենք վստահել կենդանիներին կամ մեքենաներին:
- Ինչո՞ւ պետք է, կամ ինչո՞ւ չպետք է մենք վստահենք կլիմայի հետազոտություններին:
- Արդյո՞ք կարող ենք և պե՞տք է արդյոք վստահել արհեստական բանականությանը:
- Կարո՞ղ ենք վստահել մեր զգայարաններին կամ ընկալմանը:
- Ինչպիսի՞ն է վստահության և դավաճանության միջև փոխհարաբերությունը:
- Ինչպիսի՞ն կլինե՞ր առանց վստահության աշխարհը:
- Ե՞րբ է վստահության ընդհատումը տեղին:
- Ի՞նչ ենք մենք վտանգում, երբ վստահում ենք:
- Ի՞նչ կապ կա վստահության և դավադրության տեսությունների միջև:
- Վստահությունը միշտ լա՞վ է, արդարացվա՞ծ է:
- Կա՞ տարբերություն վստահության և ընկերության միջև:
- Հավաքական գործողությունները վստահություն պահանջո՞ւմ են:
- Կարո՞ղ եմ վստահություն հայտնել մեկին, ում հետ համաձայն չեմ:
- Վստահությունը ժողովրդավարություն է պահանջում, թե՞ հավասարություն:

Սրանք միայն ընդհանրական հարցեր են, և մենք Ձեզ կոչ ենք անում մտածել հանրային վստահության թեմայի վերաբերյալ ձեր սեփական հարցերի մասին: Ի վերջո, լավ մտածող լինելը պահանջում է նաև անդրադառնալ միևնույն չբարձրացված հարցերի:

Հետևյալ հղումները տրամադրում են որոշ ռեսուրսներ, որոնք կարող են վստահության վերաբերյալ ձեր հետազոտություններն իրականացնելիս օգնել ձեզ:

- Ինչո՞ւ վստահել փորձագետներին <https://peritia-trust.eu/why-trust-experts/>
- Այն ամենը, ինչ չենք հասկանում վստահության մասին (տարբեր լեզուներով) https://www.ted.com/talks/onora_o_neill_what_we_don_t_understand_about_trust?language=en

- Փորձագետների հանդեպ վստահություն. ինչո՞ւ այո և ինչո՞ւ ոչ: <https://jericho-chambers.com/trust-in-experts-why-and-why-not/>
- Սթենֆորդի փիլիսոփայական հանրագիտարան, վստահություն <https://plato.stanford.edu/entries/trust/>.

Ինչպե՞ս կարող եմ մասնակցել «Երիտասարդները վստահության մասին» մրցույթին:

«Երիտասարդները վստահության մասին» մրցույթը հանրային վստահությանը նվիրված առաջնություն է, որին կարող են մասնակցել 13-18 տարեկան դպրոցականները: Եվրոպայում բնակվող 13-18 տարեկան բոլոր աշակերտները կարող են դիմել: Հայտերը կընդունվեն հետևյալ լեզուներով՝ հայերեն, հոլանդերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, նորվեգերեն, լեհերեն: Աշակերտները կարող են ներկայացնել միայն անհատական աշխատանքներ: Կարելի է ներկայացնել միայն մեկ աշխատանք:

Մասնակցելու համար.

- Ձեռք բերեք ձեր ծնողի, դպրոցի կամ ուսուցչի գրավոր աջակցությունը:
- Որպես ելակետ ընտրեք հանրային վստահությանն առնչվող խնդիր կամ մտահոգություն:
- Մշակեք կոնկրետ հարց՝ որպես ձեր նախագծի առանցք, որին դուք կանդրադառնաք տարբեր կողմերից և կտաք դրա պատասխանները:
- Քննարկեք ձեր հարցը ձեր ընտանիքի, ընկերների, ուսուցիչների հետ և դպրոցում ձեր դասընկերների հետ:
- Գտեք ձեր թեմայի վերաբերյալ տեղեկություններ գրքերում, առցանց հոդվածներում և ամսագրերում, փողքասթներում և այլն:
- Ուսումնասիրեք ձեր բարձրագրած հարցի վերաբերյալ տարբեր տեսակետները և գրառումներ կատարեք:
- Ստեղծեք նախագիծ՝ ի պատասխան այն հարցի կամ խնդրի, որը, ձեր կարծիքով, ամենակարևորն է: Ձեր նախագիծը կարող է լինել էսսեի, բլոգային գրառման, երկխոսության կամ պիեսի, փողքասթի կամ ֆիլմի ձևաչափով:
- Եթե բլոգ կամ գրավոր նախագիծ եք գրում, կարող եք ներառել նկարներ: Գրավոր նախագծերի ծավալը պետք է լինի առավելագույնը 1500 բառ:
- Ֆիլմ կամ փողքասթ պատրաստելու դեպքում դրանք պետք է տևեն ոչ ավելի, քան 8 րոպե:

Ինչպե՞ս ներկայացնեմ աշխատանքը:

Բոլոր երիտասարդներն իրենց աշխատանքները պետք է ներկայացնեն մինչև 2022 թվականի մարտի 1-ը՝ այն ուղարկելով youthontrust@peritia-trust.eu էլ. հասցեին:

Հայտն ուղարկելիս անհրաժեշտ է ներառել հետևյալ տեղեկատվությունը:

- Էլ. նամակի վերնագրի մասում գրել “PERITIA Youth on Trust Award”
- Գրություն, որում ասվում է, որ նախագիծը ներկայացված է PERITIA Youth on Trust մրցույթին
- Ձեր դպրոցի տնօրենի կամ ուսուցչի կողմից հաստատում դպրոցի ձևաթղթի վրա (կոնտակտային տվյալներով)
- Ձեր ամբողջական անունը
- Ձեր դպրոցի, քաղաքի և երկրի անունը
- Լեզուն
- Տարիքը և դասարանը
- Էլ. հասցեն
- Ուսուցչի կամ ծնողի անունը և կոնտակտային տվյալները

Ամբողջական տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ youthontrust.eu

Չարցերի դեպքում կարող եք գրել youthontrust@peritia-trust.eu Էլ. հասցեին:

PERITIA – Policy Expertise and Trust

peritia-trust.eu

Twitter, [Facebook](#), [YouTube](#)

Irish Young Philosophers Awards

youngphilosopherawards.ucd.ie

Twitter, [Facebook](#), [YouTube](#)



Ծրագիրը ֆինանսավորում է Եվրոպական միության Չորիզոն 2020 հետազոտական և նորարարական ծրագրի կողմից՝ No 870883 դրամաշնորհային համաձայնագրի ներքո: